

**«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ»
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
(Վենետիկի հանձնաժողով)**

**ԶԵԿՈՒՅՑ
ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԿԱՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԱՍ 1-ին
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ (ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ)
ԱՆԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ**

Ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 82-րդ
լիազումար նիստում
(Վենետիկ, 12-13-ը մարտի 2010թ.)

Պրն Գուլիդո Նեպպի Մոդոնայի (փոխարինող անդամ, Իտալիա),
Տկն Անգելիկա Նուսսերգերի (փոխարինող անդամ, Գերմանիա),
Պրն Հյորթուր Թորֆասոնի (անդամ, Իռլանդիա),
Պրն Վալերի Զորկինի (անդամ, Ռուսաստան)
մեկնաբանությունների հիման վրա

Բովանդակություն	
Ներածություն	2
I. Նախնական դիտարկումներ.....	2
II. Առկա չափանիշները.....	3
III. Դատական իշխանության անկախության հատուկ ասպեկտները.....	4
1. Դատական իշխանության անկախության երաշխավորվածության մակարդակը.....	4
2. Նշանակման կամ առաջխաղացման հիմքերը.....	6
3. Նշանակման և խորհրդատվական մարմինները.....	6
4. Պաշտոնավարումը-նշանակման ժամանակահատվածը.....	8
5. Պաշտոնավարումը-անփոփոխելիությունը և կարգապահությունը-տեղափոխումները.....	9
6. Դատավորների վարձատրությունը.....	10
7. Դատական համակարգի բյուջեն.....	11
8. Ազատություն չհիմնավորված արտաքին ազդեցությունից.....	13
9. Դատական ակտերի վերջնական լինելու բնույթը.....	14
10. Անկախությունը դատական համակարգի ներսում (շրջանակներում).....	15
11. Գործերի բաշխումը և իրավասու դատավոր ունենալու իրավունքը.....	16
IV. Եզրահանգումներ.....	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. 2008 թվականի հուլիսի 11-ին Խորհրդարանական վեհաժողովի իրավաբանական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահը նամակով խնդրել է Վենետիկի հանձնաժողովին տալ կարծիք «Դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ»: Հանձնաժողովը «հետաքրքրված է ինչպես առկա acquis-ի ներկայացմամբ, այնպես էլ դրա հետագա զարգացման առաջարկություններով՝ համեմատական վերլուծության հիման վրա, հաշվի առնելով Եվրոպայում իրավական համակարգերի հիմնական ընտանիքները»:

2. Հանձնաժողովը հանձնարարել է Արդարադատության հարցերով իր ենթահանձնաժողովին պատրաստել սույն զեկույցը, որն այս կապակցությամբ քննարկումներ է կազմակերպել Վենետիկում 2008 թվականի հոկտեմբերի 16-ին, 2008 թվականի դեկտեմբերի 11-ին, 2009 թվականի մարտի 12-ին, 2009 թվականի դեկտեմբերի 10-ին և 2010 թվականի մարտի 11-ին:

3. Ենթահանձնաժողովը որոշել է կազմել դատական համակարգի անկախության վերաբերյալ երկու զեկույց՝ որոնցից մեկը վերաբերում է դատախազությանը, իսկ սույն զեկույցը՝ դատավորներին, պատրաստված պրն Նեպալի Մոդոնայի (CDL-JD(2009)002), տկն Նուսսերգերի (CDL-JD(2008)006), պրն Զորկինի (CDL-JD(2008)008) և պրն Թորֆասոնի մեկնաբանությունների հիման վրա:

4. 2008 թվականի դեկտեմբերին Իրավական համագործակցության եվրոպական հանձնաժողովի (ԻՅԵՀ) ներկայացուցիչ պրն Դեշը և Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) նախագահ տկն Լաֆֆրանքը մասնակցել են Հանձնա-ժողովի աշխատանքներին: Տկն Լաֆֆրանքը նաև ներկայացրել է գրավոր մեկնաբանու- թյուն (CDL-JD(2008)002):

5. Սույն զեկույցը քննարկվել է Հանձնաժողովի լիազույմար նիստերում 2008 թվականի հոկտեմբերի 17-18-ին, 2008 թվականի դեկտեմբերի 12-13-ին, 2009 թվականի հունիսի 12-13-ին, 2010 թվականի հոկտեմբերի 9-10-ին և 2009 թվականի դեկտեմբերի 11-12-ին և ընդունվել Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ իր 82-րդ լիազույմար նիստում (2010 թվականի մարտի 12-13, Վենետիկ):

I. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

6. Դատական իշխանության անկախությունն ունի ինչպես օբյեկտիվ բաղադրիչ՝ որպես Արդարադատության պարտադիր հատկանիշ, այնպես էլ սուբյեկտիվ բաղադրիչ՝ որպես անհատի՝ իր իրավունքները և ազատությունները անկախ դատավորի կողմից սահմանվելու իրավունք: Առանց անկախ դատավորների չի կարող լինել իրավունքների և ազատությունների ճիշտ և օրինական իրականացում: Հետևաբար, դատական իշխանության անկախությունն ինքնանպատակ չէ: Այն դատավորների անձնական առավելությունը չէ, այլ պայմանավորված է դատավորների՝ որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորի դերի իրագործման անհրաժեշտությամբ:

7. Դատավորների անկախությունը, և հետևաբար, դատական իշխանության հեղինակությունը տվյալ հասարակությունում կախված է բազմաթիվ գործոններից: Ի լրումն անկախությունը երաշխավորող ինստիտուցիոնալ կանոնների՝ գործը քննող անհատ դատավորի անձնական հատկանիշները և մասնագիտական որակներն ունեն կարևորագույն նշանակություն: Իրավական մշակույթն ինքնին նույնպես կարևոր է:

8. Ինստիտուցիոնալ կանոնները պետք է ձևակերպվեն այնպես, որպեսզի երաշխավորեն բարձր որակավորում ունեցող և անձնապես վստահելի դատավորների ընտրություն, և սահմանվեն կառուցակարգեր, որոնց պայմաններում դատավորները կարող են գործել չենթարկվելով անհիմն արտաքին ազդեցության:

9. Դատական իշխանության անկախության չափանիշների ընդգրկումն համալիր ստեղծելու խնդիրն արժարժվել է բազմաթիվ փաստաթղթերում՝ նպատակ ունենալով սահմանել կողմնորոշիչներ: Այս փաստաթղթերը՝ միջազգային կազմակերպությունների, պաշտոնական մարմինների կամ անկախ խմբերի կողմից հրապարակված լինելով կամ ոչ, առաջարկում են ընգրկումն մոտեցում, թե որոնք պետք է լինեն դատական իշխանության անկախության տարրերը. դատական իշխանության անկախության դերը և կարևորությունը՝ իրավունքի գերակայության ապահովման հարցում, և մարտահրավերների տեսակները, որոնց այն կարող է բախվել գործադիրի, օրենսդրի կամ ուրիշների կողմից:

10. Շատ երկրներում փորձը ցույց է տալիս, որ լավագույն ինստիտուցիոնալ կանոնները չեն կարող գործել առանց այն անձանց բարի կամքի, ովքեր պատասխանատու են դրանց կիրառման և կատարման համար: Ի վե՛ջ առկա չափանիշների իրագործումն ունի նույնքան կարևորություն, որքան նոր չափանիշների պահանջների վերհանումը: Այնուամենայնիվ, սույն զեկույցը նպատակ է հետապնդում, ոչ միայն վերանայել առկա չափանիշները, այլ նաև հստակեցնել այն ոլորտները որտեղ ահրաժեշտ կլինեն նոր չափանիշներ՝ փոխելու պրակտիկան, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ դատական իշխանության անկախության համար:

11. Անհրաժեշտ է նշել, որ որոշ սկզբունքներ կիրառելի են միայն սովորական արդարադատությունում ազգային մակարդակով, սակայն ոչ սահմանադրական դատարանների կամ միջազգային դատավորների նկատմամբ, որոնք դուրս են սույն զեկույցի շրջանակներից:

II. ԱՌԿԱ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

12. Եվրոպական և միջազգային մակարդակով առկա է փաստաթղթերի լայն շրջանակ՝ վերաբերելի դատական անկախությանը: Աննպատակահարմար կլինի սկսել սկզբից և նոր փորձ կատարել՝ որոշելու դատական իշխանության անկախության չափանիշներ, ուստի և Վենետիկի հանձնաժողովը սույն զեկույցում կհիմնվի առկա փաստաթղթերի վրա:

13. Եվրոպական մակարդակով, անկախ և անաչառ դատարանի իրավունքն առաջին հերթին երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով («1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք...»):

Դատարանի Նախադեպային իրավունքը լույս է սփռում դատական անկախության մի շարք կարևոր ասպեկտների վրա, սակայն չի մոտենում խնդիրն համակարգային եղանակով:

14. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից բացի, Եվրոպական մակարդակում դատական իշխանության անկախության ամենահեղինակավոր փաստաթուղթը «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» Նախարարների Կոմիտեի թիվ (94) 12 Հանձնարարականն է: Այս փաստաթուղթը ներկայումս վերանայման փուլում է, և Վենետիկի հանձնաժողովը հույս ունի, որ սույն զեկույցը ևս օգտավետ կլինի նշված համատեքստում:

15. Թեև այս փաստաթուղթը չի սահմանում շատ մանրամասներ, մի շարք փորձեր են կատարվել դատական իշխանության անկախության առավել կատարելագործված փաստաթուղթ կազմելու ուղղությամբ: Հավանաբար, դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափանիշների վերաբերյալ ամենաընդգրկուն փաստաթուղթը Եվրոպական Դատավորների Խորհրդատվական Խորհրդի (ԵԴԽՄ) թիվ 1 Կարծիքն է: ԵԴԽՄ-ի այլ կարծիքներ նույնպես վերաբերելի են այս համատեքստում, օրինակ՝ ԵԴԽՄ-ի «Արդար դատաքննություն ողջամիտ ժամկետում» թիվ 6 Կարծիքը, «Արդարադատության (դատական) խորհուրդները՝ ի շահ հանրության» թիվ 10 Կարծիք և «Դատական որոշումների որակը» թիվ 11 Կարծիքը:

16. Եվրոպայի խորհրդի մեկ այլ փաստաթուղթ է Դատավորների կարգավիճակի Եվրոպական խարտիան, հաստատված Եվրոպայի Խորհրդի Իրավաբանական Հարցերի Դիրեկտորատի կողմից 1998 թվականի հուլիսին Ստրասբուրգում կազմակերպված բազմակողմ հանդիպման ընթացքում:

17. Դատական նշանակումների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի զեկույցը (CDL-AD (2007)028) կարգավորում է դատական իշխանության անկախության համար առանձնահատուկ կարևորության հարցեր: Այլ ասպեկտներ դիտարկվում են Վենետիկի հանձնաժողովի տարբեր կարծիքներում:

18. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածի վրա հիմնված՝ («Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների և պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունք») առկա են Միավորված Ազգերի մի շարք չափանիշներ դատական իշխանության անկախության վերաբերյալ, մասնավորապես՝ Միավորված Ազգերի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1985 թվականին սահմանված Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքները և Դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները՝ ընդունված 2002 թվականին: Այս չափանիշները հաճախ համընկնում են Եվրոպայի Խորհրդի չափանիշների հետ, սակայն, սովորաբար, դուրս չեն գալիս դրանց շրջանակից:

19. Սույն զեկույցը նպատակ է հետապնդում ներկայացնելու Եվրոպական չափանիշների բովանդակությունը համաձայնեցված կերպով: Այն հիմնականում հետևում է ԵԴԽՄ-ի թիվ 1 Կարծիքի կառուցվածքին:

III. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

1. Դատական իշխանության անկախության երաշխավորվածության մակարդակը.

20. Թիվ (94) 12 Հանձնարարականը սահմանում է (Սկզբունք I.2.a) Դատավորների անկախությունը պետք է երաշխավորվի Կոնվենցիայի դրույթներին և սահմանադրական սկզբունքներին համապատասխան, օրինակ՝ ներդնելով առանձնահատուկ դրույթներ սահմանադրություններում կամ այլ օրենսդրությունում կամ սույն հանձնարարականի դրույթներն ինկորպորացնելով ազգային օրենսդրությունում:

21. ԵԴԽՄ-ի թիվ 1 Կարծիքը հանձնարարում է (16¹), հետևելով Եվրոպական Խարտիայի հանձնարարականին, առաջ գնալ՝ Դատավորների կարգավիճակի հիմնական

¹ Եթե այլ բան նշված չէ, ապա հղումները ԵԴԽՄ-ին կվերաբերեն դրա թիվ 1 Կարծիքին:

² Սահմանադրական դրույթների օրինակներ են.

Ալբանիա-Սահմանադրության 145-րդ հոդված՝

1. Դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքներին:

Անդորրա-Սահմանադրության 85-րդ հոդված՝

սկզբունքներն ամրագրված են ազգային նորմերում բարձրագույն մակարդակով և դրանց կանոններն առնվազն օրենսդրական մակարդակով:

1. Անդրրայի ժողովրդի անունից արդարադատությունն իրականացվում է միայն անկախ դատավորների կողմից, որոնք անփոփոխելի են մինչև իրենց դատական գործառնությունների իրականացման ավարտը՝ պատասխանատու լինելով միայն Սահմանադրության և օրենքների առջև:

Ավստրալիա- Սահմանադրության 87-րդ հոդված՝

(1) Դատավորներն անկախ են իրենց՝ դատավորի պաշտոնում գործելիս:

Չեխիայի Հանրապետություն-Սահմանադրության 81-րդ հոդված՝

Դատական իշխանությունը պետք է գործի Հանրապետության անունից անկախ դատարանների միջոցով:

Վրաստան-Սահմանադրության 84-րդ հոդված՝

1. Դատավորը պետք է լինի անկախ իր գործունեության մեջ և պետք է ենթարկվի միայն Սահմանադրությանը և օրենքին: Ցանակացած ճնշում դատավորի նկատմամբ կամ միջամտություն նրա գործունեությանը նրա որոշումների վրա ազդելու տեսանկյունից պետք է արգելվի և պատժելի է օրենքով:

Գերմանիա-Հիմնական օրենքի 97-րդ հոդված-Դատավորների անկախությունը՝

(1) Դատավորները պետք է անկախ լինեն և ենթարկվեն միայն օրենքին:...

Հունաստան-Սահմանադրության 87-րդ հոդված՝

Արդարադատությունը պետք է իրականացվի մշտական դատավորներից բաղկացած դատարանների կողմից, ովքեր պետք է ունենան գործառնության և անձնական անկախություն:...

Իռլանդիա-Սահմանադրության 70-րդ հոդված՝

Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների և պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի ողջամիտ ժամկետներում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի դատաքննության իրավունք:

Դատական քննությունը պետք է լինի հրապարակային, քանի դեռ դատավորն օրենքին համապատասխան այլ որոշում չի կայացրել՝ պաշտպանելու բարոյականությունը, հանրային կարգը, ազգային անվտանգությունը կամ կուսակցությունների շահերը:

Իտալիա-Սահմանադրության 101.2-րդ հոդված. «Դատավորները ենթարկվում են միայն օրենքին» և Սահմանադրության 104.1-րդ հոդված՝ «Արդարադատությունը կարգ է առ այն, որ ինքնավար է և անկախ մյուս իշխանություններից»:

Լատվիա-Սահմանադրության 83-րդ հոդված՝

Դատավորները պետք է անկախ լինեն և ենթարկվեն միայն օրենքին:

Լիտվիա-Սահմանադրության 109-րդ հոդված՝

Լիտվայի Հանրապետությունում դատարանները պետք է ունենան բացառիկ իրավունք իրականացնելու արդարադատություն:

Արդարադատություն իրականացնելիս դատավորները և դատարանները պետք է լինեն անկախ: Գործերը քննելիս դատավորները պետք է ենթարկվեն միայն օրենքին: Դատարանները պետք է որոշումներ ընդունեն Լիտվայի Հանրապետության անունից:

Պորտուգալիա-Սահմանադրության 203-րդ հոդված-Անկախություն

Դատարաններն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին:

Սահմանադրության 216-րդ հոդված-Երաշխիքները և որակագրվումները:

1. Դատավորներն ամփոփելի են և նրանց տեղափոխումը, լիազորությունների ժամանակավոր կասեցումը, կոնսաբոշակի անցնելը կամ պաշտոնավարման դադարեցումը կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված դեպքերում:
2. Դատավորները չեն կարող պատասխանատվության ենթարկվել իրենց որոշումների համար՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
3. Իրենց ծառայողական պարտականությունները կատարող դատավորները չպետք է իրականացնեն որևէ այլ գործառնություն, ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր՝ բացառությամբ օրենքով սահմանված կարգով անվճար հիմունքներով մանկավարժական կամ իրավական-հետազոտական գործունեության:
4. Իրենց ծառայողական պարտականությունները կատարող դատավորները չեն կարող նշանակվել իրականացնելու դատարանների գործունեության հետ չկապված այլ գործառնություններ՝ առանց համապատասխան բարձր վերադաս խորհրդի թույլտվության:
5. Օրենքով կարող են սահմանվել դատավորի գործառնությունների իրականացման հետ անհամատեղելի այլ իրավիճակներ:

Ռումինիա-Սահմանադրության 123-րդ հոդված-Արդարադատության իրականացումը

(1) Արդարադատությունը պետք է իրականացվի օրենքի անունից:

(2) Դատավորները պետք է լինեն անկախ և ենթարկվեն միայն օրենքին:

Ռուսաստանի Դաշնություն-Սահմանադրության 10-րդ հոդված՝

Ռուսաստանի Դաշնությունում պետական իշխանությունը պետք է իրականացվի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման հիման վրա: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների մարմինները պետք է լինեն անկախ:

Սահմանադրության 120-րդ հոդված՝ 1. Դատավորները պետք է լինեն անկախ և պատասխանատու լինեն միայն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության և դաշնային օրենքի առջև:...

Սլովենիա-Սահմանադրության 125-րդ հոդված-Դատավորների անկախությունը

Դատավորներն իրենց պարտականությունները և գործառնությունները իրականացնելիս պետք է գործեն անկախորեն Սահմանադրությանը և օրենքին համապատասխան:

Թուրքիա-Սահմանադրության 138-րդ հոդված՝ Դատավորները պետք է անկախորեն իրականացնեն իրենց պարտականությունները, նրանք պետք է վճիռներ կայացնեն Սահմանադրությանը, օրենքին համապատասխան, ինչպես նաև իրենց՝ օրենքին համապատասխան համոզմունքների հիման վրա:

Ոչ մի մարմին, իշխանություն, պաշտոնատար անձ կամ անհատ չի կարող հրաման կամ ցուցումներ տալ դատարաններին կամ դատավորներին՝ դատական իշխանության գործունեության հետ կապված, կամ նրան հղել շրջաբերականներ, տալ հանձնարարականներ կամ առաջարկություններ:

Օրենսդրական Ասամբլեայում որևէ հարց չի կարող տրվել, քննարկումներ կազմակերպվել կամ եզրահանգումներ տրվել դատական իշխանության իրականացման վերաբերյալ դատարանի վարությամբ գտնվող գործի առնչությամբ:

Օրենքում նման օրինակ է հանդիսանում Միացյալ Թագավորության Սահմանադրական բարեփոխումների ակտը 2005 թվականի բ.3, որը սահմանում է, որ կառավարության բոլոր նախարարները, ովքեր ունեն պատասխանատվություն արդարադատության կամ դատական համակարգի կառավարման հարցերով պետք է պահպանեն դատական համակարգի մշտական անկախությունը:

22. Վենետիկի հանձնաժողովն այս մոտեցման ջատագովն է: Դատական իշխանության անկախությունը երաշխավորող հիմնական սկզբունքները պետք է ամրագրվեն Սահմանադրությունում կամ համարժեք փաստաթղթերում²:

2. Նշանակման կամ առաջխաղացման հիմքերը.

23. Թիվ (94) 12 Հանձնարարականը սահմանում է, որ «Դատավորների մասնագիտական առաջխաղացմանը վերաբերելի բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, և դատավորների ընտրությունն ու առաջխաղացումը պետք է հիմնված լինեն արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումը, ազնվությունը, կարողությունները և աշխատանքի արդյունավետությունը»:

24. ԵԴԽԽ-ի թիվ 1 Կարծիքն ի լրումն հանձնարարարում է (25). «Անդամ պետությունների այն մարմինները, որոնք պատասխանատու են նշանակումները և առաջխաղացումները կատարելու և այդ կապակցությամբ խորհրդատվություն տալու համար, պետք է ներկայացնեն, հրապարակեն և կենսագործեն օբյեկտիվ չափանիշներ՝ նպատակ ունենալով ապահովելու դատավորների ընտրությունը և առաջխաղացումը «հիմնված արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումը, ազնվությունը, կարողությունները և աշխատանքի արդյունավետությունը»: Արժանիքը չի նշանակում լոկ իրավական գիտելիքներ, վերլուծական հմտություններ կամ ակադեմիական ունակություններ: Այն պետք է վերաբերի բնավորությանը, որոշումներ կայացնելուն, հասանելի լինելուն, հաղորդակցության հմտություններին, դատական ակտեր կայացնելու արդյունավետությանը և այլն:

25. Կարևոր է, որ դատավորն ունենա արդարության և անաչառության զգացում: Ինչևէ, գործնականում կարող է դժվար լինել գնահատել այս չափանիշները: Թափանցիկ գործընթացներ և համաձայնեցված փորձ է պահանջվում դրանց կիրառման դեպքում:

26. Ի վերջո, արժանիքը լինելով առաջնային չափորոշիչ, դատական համակարգում բազմազանությունը հնարավորություն կստեղծի հանրության համար վստահելու և ընդունելու դատական համակարգը որպես ամբողջություն: Քանի որ դատական համակարգը ներկայացուցչական չէ, այն պետք է բաց և հասանելի լինի հասարակության բոլոր ոլորտների որակավորված անձանց համար³:

27. Սկզբունքն ըստ որի՝ դատավորների նշանակմանը և մասնագիտական առաջխաղացմանը վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնվեն արժանիքների վրա, օրենքի շրջանակներում օբյեկտիվ չափանիշների կիրառմամբ, անվիճելի է:

3. Նշանակման և խորհրդատվական մարմինները.

28. Թիվ (94) 12 Հանձնարարականն առաջնայնություն է տալիս արդարադատության (դատական) խորհրդին, սակայն ընդունում է նաև այլ համակարգեր.

«Դատավորների ընտրության և առաջխաղացման որոշումներ ընդունող մարմինը պետք է անկախ լինի կառավարությունից և վարչակազմից: Այդ մարմնի անկախությունը երաշխավորելու նպատակով՝ իրավակարգավորումները պետք է ապահովեն, որ, օրինակ, դրա անդամներն ընտրվում են դատական համակարգից և որ այդ մարմինն ինքն է որոշում իր ընթացակարգային կանոնները:

Ինչևիցե, երբ սահմանադրական կամ այլ իրավական դրույթներն ու ավանդույթները թույլ են տալիս դատավորների նշանակում կառավարության կողմից, այդ պարագայում

³ Տե՛ս նաև Սահմանադրական դատարանների վերաբերյալ նման եզրահանգում, Սահմանադրական դատարանների կազմի վերաբերյալ գեկույց, Ժողովրդավարության գիտություն և տեխնիկա թիվ 20, էջ 30:

պետք է լինեն երաշխիքներ, որոնք կապահովեն դատավորներին նշանակելու ընթացակարգերի թափանցիկ և անկախ լինելը գործնականում, և որոշումների վրա որևէ ազդեցություն որևէ հիմքով չի կարող իրականացվել, բացառությամբ վերոհիշյալ օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

29. ԵԴԽԽ-ն ևս փաստում է ի օգուտ անկախ մարմնի ներգրավման (45-րդ կետ). ԵԴԽԽ-ն համարում է, որ Եվրոպական Խարտիան, որքանով որ այն կողմ է հանդես գալիս անկախ մարմնի միջամտությանը (բավականին լայն իմաստով՝ ներառելով կարծիք, խորհրդատվություն կամ առաջարկություն, ինչպես նաև պրակտիկ որոշումներ) նշանակալի դատական ներկայացուցչությամբ՝ ընտրված ժողովրդավարական եղանակով այլ դատավորների կողմից, համընկնում է ուղղությանը, որը ԵԴԽԽ-ն կցանկանար խորհուրդ տալ: Սա հատկապես կարևոր է այն երկրների համար, որոնք չունեն այլ խորապես արմատավորված և ժողովրդավարական եղանակով փորձարկված համակարգեր:

30. ԵԴԽԽ-ն «Արդարադատության խորհուրդ՝ ի շահ հանրության» թիվ 10 Կարծիքում այնուհետև զարգացնում է իր դիրքորոշումը (16-րդ կետ). «Արդարադատության խորհուրդը կարող է բաղկացած լինել ինչպես բացառապես դատավորներից, այնպես էլ ունենալ խառը կազմ՝ դատավորներ և ոչ դատավորներ: Երկու դեպքում էլ պետք է խուսափել անձնական շահերի, ինքնապաշտպանության և քրոնիզմի տարրերից» և (19-րդ կետ) «ԵԴԽԽ-ի տեսակետով նման խառը կազմն առավելություն կընձեռնի խուսափել անձնական շահերի, ինքնապաշտպանության և քրոնիզմի տարրերից, ինչպես նաև արտահայտել հասարակության տարբեր տեսակետներ՝ այդ կերպ ապահովելով դատական իշխանությունը լեգիտիմության լրացուցիչ աղբյուրով: Ինչևէ, նույնիսկ երբ անդամակցությունն խառն է, Արդարադատության խորհրդի գործունեությունը չպետք է առհասարակ հայտնվի խորհրդարանական մեծամասնությունների ազդեցության ներքո կամ որևէ կերպ ենթարկվի ճնշման գործադիր կողմից, և ազատ լինել քաղաքական կուսակցության շահերի ցանկացած ենթակայությունից, այնպես, որ պաշտպանվեն արդարադատության արժեքները և հիմնարար սկզբունքները»:

31. Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը (CDL-AD (2007)028) առավել մանրամասն է. «44. Եվրոպայում առկա է դատավորների նշանակման տարբեր համակարգեր և չկա մեկ մոդել, որը կիրառվի բոլոր երկրներում:

45. Առավել հին ժողովրդավարական պետություններում գործադիր իշխանությունը երբեմն ունի որոշիչ ազդեցություն դատավորների նշանակման գործընթացում: Նման համակարգերը կարող են լավ աշխատել գործնականում և ապահովել դատական իշխանության անկախությունը, քանի որ այս իրավասությունը սահմանափակված է իրավական մշակույթով և ավանդույթներով, որոնք զարգացել են երկար ժամանակի ընթացքում:

46. Նոր ժողովրդավարական պետությունները դեռևս չունեն հնարավորություն զարգացնելու այնպիսի ավանդույթներ, որոնք կարող են կանխարգելել չարաշահումները, և հետևաբար, այս երկրներում հստակ սահմանադրական և իրավական դրույթներ են անհրաժեշտ որպես երաշխիք կանխարգելելու քաղաքական չարաշահումները դատավորների նշանակման հարցերում:

47. Սովորական (ոչ սահմանադրական) դատարանների դատավորների նշանակումները խորհրդարանի քվեարկությանը դնելու համապատասխան առարկա չեն, քանզի այդ դեպքում չի կարելի բացառել քաղաքական շահերի՝ թեկնածուի օբյեկտիվ արժանիքների վրա գերիշխելու վտանգը:

48. Դատական իշխանության անկախությունը երաշխավորող համապատասխան մեթոդն Արդարադատության խորհրդի ստեղծումն է, որը պետք է օժտված լինի իր կառուցվածքի, լիազորությունների և ինքնավարության սահմանադրական երաշխիքներով:

49. Նման Խորհուրդը պետք է ունենա որոշիչ ազդեցություն դատավորների նշանակման և առաջխաղացման գործընթացում, ինչպես նաև նրանց նկատմամբ կարգապահական միջոցների առումով:

50. Արդարադատության խորհրդի էական մասը կամ անդամների մեծամասնությունը պետք է ընտրվեն Դատական համակարգի կողմից: Արդարադատության խորհրդի ժողովրդավարական լեգիտիմությունն ապահովելու նպատակով՝ մյուս անդամները պետք է ընտրվեն խորհրդարանի կողմից համապատասխան իրավաբանական որակավորում ունեցող անձանց շրջանակից:

32. Ընդհանրացնելով՝ Վենետիկի հանձնաժողովի տեսակետն է, որ դատական իշխանության անկախությունը երաշխավորող պատշաճ մեթոդ է այն, որ Արդարադատության խորհուրդը պետք է որոշիչ ազդեցություն ունենա դատավորների նշանակման և առաջխաղացման որոշումների վրա: Գնահատելով Եվրոպայի իրավական մշակույթի ձեռքբերումները, որոնք արժեքավոր են և պետք է պահպանվեն, չկա մեկ մոդել, որը կարող է կիրառվել բոլոր երկրներում: Հարգելով դատական համակարգերի այս բազմազանությունը՝ Վենետիկի հանձնաժողովը խորհուրդ է տալիս պետություններին, որոնք այդպիսիք չունեն, դիտարկել անկախ Արդարադատության խորհրդի կամ նման մարմնի ստեղծման հարցը: Բոլոր դեպքերում Խորհուրդը պետք է ունենա բազմակարծիք կազմ, որի անդամների էական մասը, եթե ոչ մեծամասնությունը, պետք է լինեն դատավորներ: Բացառությամբ ի պաշտոնե անդամների՝ այս դատավորները պետք է ընտրվեն կամ նշանակվեն իրենց գործընկերների կողմից:

4. Պաշտոնավարումը-նշանակման ժամանակահատվածը.

33. Թիվ (94) 12 Հանձնարարականի I.3 սկզբունքը սահմանում է. «Նշանակված կամ ընտրված դատավորները, պետք է ունենան երաշխավորված պաշտոնավարում մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը կամ պաշտոնավարման ժամկետի ավարտը»:

34. ԵԴԽՄ-ի թիվ 1 Կարծիքը լրացնում է. «Եվրոպական փորձն ընդհանրապես կողմ է անժամկետ նշանակմանը՝ մինչև օրենքով սահմանված կենսաթոշակի տարիքի լրանալը: Այս մտտեցումն առավել քիչ խնդրահարույց է անկախության տեսանկյունից» (48-րդ կետ) և «ԵԴԽՄ-ն կարծում է, որ երբ պաշտոնավարումը ժամանակավոր է կամ սահմանափակ, մարմինը, որը պատասխանատու է դատավորի անժամկետ նշանակման կամ վերանշանակման մեթոդի օբյեկտիվության և թափանցիկության համար, ունի առանձնահատուկ կարևորություն» (53-րդ կետ):

35. Նշվածը համապատասխանում է Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշմանը, որը, բացառությամբ հատուկ դեպքերի, ինչպիսիք են Մահմանադրական դատարանի դատավորները, մշտապես կողմնակից է պաշտոնավարմանը մինչև կենսաթոշակի անցնելը:

36. Այս համատեքստում առանձնահատուկ խնդիր է փորձաշրջանի սահմանումը դատավորների համար: Այս հարցը հստակորեն ընդգրկված է Եվրոպական Խարտիայում 3.3 կետում. «Երբ նշանակման ընթացակարգը պահանջում է փորձաշրջանի սահմանում, անհրաժեշտորեն կարճաժամկետ, դատավորի պաշտոնում առաջադրվելուց հետո մինչև մշտական հիմունքներով նշանակումը, կամ երբ նշանակումը կատարվել է սահմանափակ ժամկետով վերանշանակման հնարավորությամբ, մշտական հիմունքներով չնշանակելու կամ չվերանշանակելու որոշումը կարող է կայացվել Խարտիայի 1.3 պարագրաֆում նշված անկախ մարմնի կողմից, կամ վերջինիս առաջարկությամբ, կամ երաշխավորությամբ,

համաձայնությամբ կամ հետևելով այդ մարմնի կարծիքին: 1.4 կետի դրույթները նույնպես կիրառելի են փորձաշրջանի ընթացքում առանձին անձանց դեպքերում»:

37. Վենետիկի հանձնաժողովը մանրամասն դիտարկում է այս խնդիրը Դատավորների նշանակման վերաբերյալ զեկույցում (CDL-AD(2007)028). 40. Վենետիկի հանձնաժողովը համարում է, որ փորձաշրջանի սահմանումը կարող է վտանգել դատավորների անկախությունը, քանի որ նրանք կարող են ենթարկվել ճնշման որոշումների կայացման առումով:

41. Նշվածը չպետք է մեկնաբանվի որպես ժամանակավոր դատավորների նշանակման բոլոր հնարավորությունների բացառում: Հարաբերականորեն նոր դատական համակարգ ունեցող երկրներում կարող է լինել գործնական անհրաժեշտություն նախնական նշանակման, որտեղ դատավորն իրապես կարող է արդյունավետ կատարել իր պարտականությունները մինչև հիմնական նշանակումը: Եթե փորձնական նշանակումները սահմանված են որպես պարտադիր պայման, ապա դատավորին պաշտոնում նշանակելու մերժումը պետք է լինի ելնելով օբյեկտիվ չափանիշներից և միննույն ընթացակարգային երաշխիքներով, ինչպիսիք ընդունված են, երբ դատավորն ազատվում է պաշտոնից:

42. Հիմնական գաղափարն է բացառել այն գործոնները, որոնք կարող են վտանգել դատավորի անաչառությունը. «չնայած գովելի նպատակին՝ ապահովելու բարձր չափանիշներ գնահատման համակարգում, ակնհայտորեն դժվար է համատեղել դատավորի անկախությունը գործունեության գնահատման համակարգի հետ: Եթե ընտրենք երկուսից մեկը՝ դատավորի անկախությունը չափազանց արժեքավոր է»:

43. Փորձաշրջանի /գնահատման անհրաժեշտության/ և դատավորների անկախության պահանջները համատեղելու նպատակով անհրաժեշտ է ընդգծել, որ որոշ երկրներում, ինչպես օրինակ Ավստրիան, ստեղծվել է համակարգ որտեղ դատավորների թեկնածուները գնահատվում են փորձաշրջանի ընթացքում, երբ նրանք կարող են օժանդակել դատական որոշումների կազմման գործընթացին, սակայն չեն կարող դեռևս կայացնել որոշումներ, որպիսի իրավունք վերապահված է մշտական դատավորներին:

38. Ամփոփելով վերոգրյալը՝ Վենետիկի հանձնաժողովը հետևողականորեն առաջարկում է, որ սովորական դատավորները պետք է նշանակվեն մինչև կենսաթոշակի անցնելը: Փորձաշրջանը դատավորների պաշտոններում խնդրահարույց է անկախության տեսանկյունից:

5. Պաշտոնավարումը-անփոփոխելիությունը և կարգապահությունը-տեղափոխումները.

39. Անփոփոխելիության սկզբունքն անուղղակիորեն երաշխավորված է Նախարարների Կոմիտեի թիվ (94) 12 Հանձնարարականի I.3 սկզբունքում (տե՛ս ստորև):

40. ԵԴԽԽ-ն եզրակացնում է (60-րդ կետ).

«(a) դատավորների անփոփոխելիությունը պետք է լինի անկախության հստակ սահմանված բաղադրիչ՝ ամրագրված ներազգային բարձր մակարդակով (տե՛ս պարագրաֆ 16-ը ստորև),

(b) անկախ մարմնի միջամտությունը՝ ամբողջական պաշտպանություն ապահովող ընթացակարգերով, ներկայացնում է հատուկ կարևորություն կարգապահության հարցերով, և

(c) արժեքավոր կլինի մշակել չափանիշներ, որոնք կորոշեն ոչ միայն վարքագիծը, որը կարող է հանգեցնել պաշտոնից հեռացման, այլ նաև վարքագիծը, որը կարող է հանգեցնել կարգապահական միջոցների կիրառման կամ կարգավիճակի փոփոխման՝ ներառյալ օրինակ՝ տեղափոխումն այլ դատարան կամ ոլորտ:

41. Տեղափոխման հարցերն առավել առանձնահատուկ դիտարկված են Եվրոպական Խարտիայի 3.4 կետում. պաշտոնը զբաղեցնող դատավորը որպես կանոն չի կարող նշանակվել այլ դատական պաշտոնի կամ նշանակվել պաշտոնի ցանկացած այլ վայրում, անգամ՝ առաջխաղացման կարգով, **առանց ազատորեն արտահայտված համաձայնության**: Այս սկզբունքից բացառությունները թույլատրելի են միայն այն դեպքում, երբ տեղափոխումը սահմանված է և կայացված որպես կարգապահական պատժամիջոցի, երբ դատական համակարգում իրականացվում է վերակառուցում, երբ կատարվում է ժամանակավոր նշանակում համալրելու հարակից դատարանը, ընդ որում՝ նման նշանակումների առավելագույն տևողությունը հստակորեն սահմանափակվում են օրենքով, առանց վնաս հասցնելու 1.4. պարագրաֆի դրույթների կիրառմանը:

42. Նշվածը համապատասխանում է ազգային սահմանադրությունների ուսումնասիրության ժամանակ Վենետիկի հանձնաժողովի արտահայտած մտեցմանը:

43. Վենետիկի հանձնաժողովը հետևողականորեն աջակցում է դատավորների անփոփոխելիության սկզբունքի ամրագրմանը սահմանադրություններում: Տեղափոխումը դատավորի կամքին հակառակ կարող է լինել միայն բացառիկ դեպքերում: Ինչ վերաբերում է կարգապահական վարույթներին, Դատական նշանակումների վերաբերյալ⁴ Հանձնաժողովի զեկույցում կողմ է արտահայտվում արդարադատության խորհուրդների կամ կարգապահական դատարանների՝ կարգապահական վարույթներ իրականացնելու լիազորությանը: Որպես լրացում, Հանձնաժողովը հետևողականորեն փաստում է, որ պետք է լինի կարգապահական մարմինների որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն:

6. Դատավորների վարձատրությունը.

44. Թիվ (94) 12 Հանձնարարականը սահմանում է, որ դատավորների վարձատրությունը պետք է երաշխավորված լինի օրենքով (Սկզբունք I.2b.ii) և «համաչափ նրանց մասնագիտության արժանապատվությանը և պատասխանատվության մակարդակին (Սկզբունք III.1.b): Խարտիան, ԵԴԽԽ-ի դիրքորոշմանը հիմնվելով, ընդլայնում է այս սկզբունքի կիրառումը՝ **ներառելով նաև հիվանդության երաշխավորված նպաստի և կենսաթոշակի հարցերը**:

45. ԵԴԽԽ-ն լրացրել է թիվ 1 Կարծիքը նշելով. «62. Թեև որոշ համակարգերում (օր.՝ Հյուսիսային երկրներում) նշված խնդիրները լուծվում են ավանդական մեխանիզմներով՝ առանց ձևական իրավական դրույթների, ԵԴԽԽ-ն անհրաժեշտ է համարում, որ ընդհանուր առմամբ կարևոր է (և հատկապես նոր ժողովրդավարական պետությունների հետ հարաբերություններում) հատուկ իրավական կարգավորումների մշակումը, որոնք երաշխավորում են դատավորների վարձատրությունը կրճատումներից, և ի վերջո ապահովում փաստացի կարգավորում աշխատավարձերի՝ կենսաապահովման ծախսերի ավելացմանը համապատասխան աճելու վերաբերյալ:

46. Վենետիկի հանձնաժողովը կիսում է այն կարծիքը, որ դատավորների վարձատրությունը պետք է համաչափ լինի մասնագիտական արժանապատվությանը և համապատասխան վարձատրությունն անհրաժեշտ պայման է դատավորներին անհիմն արտաքին ազդեցությունից պաշտպանելու համար: Դրական մտեցում է Լեհաստանի Սահմանադրության օրինակը, որը դատավորների համար երաշխավորում է նրանց պաշտոնի հեղինակությանը և պարտականությունների շրջանակին համարժեք վարձատրություն: Վարձատրության մակարդակը պետք է սահմանվի պետության սոցիալական պայմանների լույսի ներքո **և համապատասխանի այլ բարձրաստիճան պետական պաշտոն զբաղեցնող**

⁴ CDL-AD(2007)028, պարագրաֆ 49:

անձանց վարձատրության մակարդակին: Վարձատրությունը պետք է հիմնված լինի ընդհանուր չափանիշի վրա՝ հաշվի առնելով օբյեկտիվ և թափանցիկ չափանիշները, և ոչ թե դատավորի անհատական գործունեության գնահատումը: Հավելավճարները, որոնք ներառում են հայեցողականության տարր պետք է բացառվեն:

47. Մի շարք՝ հիմնականում հետսովետական երկրներում դատավորները ստանում են նաև ոչ դրամական արտոնություններ, ինչպիսիք են բնակարանը, ավտոմեքենան և այլն: Դատավորների նման ոչ դրամական փոխհատուցումներն ունեն երկու հիմնական ծագում. Առաջինը հիմնվում է ապրանքների բաշխման նախկին սոցիալիստական համակարգի վրա, որը կախված էր կենտրոնական պլանավորումից: Որոշ խմբեր, ներառյալ դատավորները, արտոնված էին ունենալ որոշակի ապրանքներ՝ ներառյալ բնակարաններ: Մա դատավոր լինելու էական առավելություն էր:

48. Երկրորդ աղբյուրը նման փորձի հիմնված է հետսովետական շրջանում շուկայական տնտեսության անցումով: Անշարժ գույքի գները բազմակի անգամ աճել էին և այս հանգամանքն անհնարին էր դարձնում համապատասխան բնակարանի ձեռքբերումը պետական ծառայողների՝ այդ թվում նաև դատավորների համար: Նման պարագայում ևս դատավոր լինելու առավելություններից մեկը բնակարանի ձեռքբերումն էր: Երիտասարդ դատավորները հատկապես չէին կարող հեշտությամբ ձեռքբերել անշարժ գույք և, արդյունքում պահպանվում է բնակարանների հատկացման համակարգը:

49. Թեև սեփականության հատկացումը անհանգստության առարկա է, դյուրին խնդիր չէ նաև դատավորներին համապատասխան կենսամակարդակով ապահովելը՝ ներառյալ բնակարանի հատկացումը: Նման ոչ ֆինանսական հատկացումների օգտին վկայակոչվում է այն փաստարկը, որ դրանք կարող են տրամադրվել անհատական կարիքները հաշվի առնելով, մինչդեռ, աշխատավարձերը տվյալ կատեգորիայի բոլոր դատավորների համար նույն մակարդակում են սահմանվում, առանց հատուկ կարիքի դեպքերում նրանց աջակցելու հնարավորության: Այնուամենայնիվ, սոցիալական պահանջ-մունքների այս գնահատումը և դատավորների միջև տարբերակումը **կարող է բաց դուռ հանդիսանալ չարաշահումների և սուբյեկտիվ չափանիշների կիրառման համար:**

50. Նույնիսկ եթե նման արտոնությունները որոշված են օրենքով, մշտապես առկա է հայեցողականության դաշտ, դրանց բաշխման առումով: **Դրանք պոտենցիալ վտանգ են ներկայացնում դատական իշխանության անկախության համար:** Որոշ երկրներում կարող է դժվար լինել նման ոչ ֆինանսական արտոնությունների անմիջապես վերացումը, քանի որ դրանք համապատասխանում են սոցիալական արդարության հասնելու ընկալված անհրաժեշտությանը, Վենետիկի հանձնաժողովը խորհուրդ է տալիս նման արտոնությունների աստիճանաբար վերացում և դրանց փոխարինումը դրամական վարձատրության համարժեք մակարդակով:

51. Ընդհանրացնելով վերոգրյալը՝ Վենետիկի հանձնաժողովը պահպանում է կարծիքը, որ դատավորների վարձատրության մակարդակը պետք է երաշխավորվի օրենքով նրանց զբաղեցրած պաշտոնի արժանապատվությանը և պարտականությունների շրջանակին համապատասխան: Պարզեցվածքները և ոչ ֆինանսական եկամուտները, որոնց տրամադրումը ներառում է հայեցողականության տարր, պետք է աստիճանաբար վերացվեն:

7. Դատական համակարգի բյուջեն.

52. Դատական համակարգի անկախության երկարաժամկետ և կարճաժամկետ ապահովման նպատակով՝ անհրաժեշտ կլինի դատարաններն ապահովել անհրաժեշտ ռեսուրսներով որպեսզի դատավորները և դատարանները գործեն Մարդու իրավունքների

եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում և ազգային սահմանադրություններում ամրագրված դրույթներին համապատասխան և իրականացնեն իրենց պարտականությունները բարեխիղճ և արդյունավետ, ինչպիսի հանգամանքը կարևոր է դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ամրապնդելու և իրավունքի գերակայության առումով: Ֆինանսական բավարարվածությունը համապատասխանաբար պետք է քննարկվի բոլոր ռեսուրսների հաշվառմամբ, որոնք դատական համակարգը պետք է ունենա, որպեսզի բավարարի այդ պահանջներին, և արժանիքի ճանաչումը՝ որպես իշխանության առանձին ճյուղ:

53. Պետության պարտականությունն է ապահովել համապատասխան ֆինանսական ռեսուրսներ դատական համակարգի համար: Նույնիսկ ճգնաժամի ժամանակ դատական համակարգի բնականոն գործունեությունը և անկախությունը չպետք է վտանգվի: Դատարանները չպետք է ֆինանսավորվեն պաշտոնական մարմինների կամայական որոշումների հիման վրա, այլ կայուն կերպով՝ օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների հիման վրա:

54. Միջազգային փաստաթղթերը չեն սահմանում դատական համակարգի բյուջետային ինքնուրույնություն, սակայն առկա է հիմնավոր փաստարկ ի օգուտ դատական մարմինների կարծիքների հաշվառման բյուջեի նախապատրաստման ընթացքում:

ԵԴԽԽ-ի թիվ 2 Կարծիքը՝ դատարանների ֆինանսավորման և կարգավորման վերաբերյալ, սահմանում է. *5. ԵԴԽԽ-ն համաձայն է, որ թեև դատարանների ֆինանսավորումը պետական բյուջեի մասն է կազմում՝ ներկայացվելով Ֆինանսների նախարարի կողմից Պառլամենտին, նման ֆինանսավորումը չպետք է քաղաքական տատանումների առարկա հանդիսանա: Թեև ֆինանսավորման մակարդակը, որը պետությունը կարող է առաջարկել իր դատարաններին քաղաքական որոշում է, իշխանությունների բաժանման վրա հիմնված համակարգը պետք է մշտապես լինի հոգածության ներքո, որպիսի ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանությունները չկարողանան գործադրել որևէ ճնշում դատական համակարգի վրա՝ բյուջեի ձևավորման գործընթացում: Ֆինանսական միջոցները դատարանների միջև բաշխելու որոշումները պետք է կայացվեն դատական համակարգի անկախության սկզբունքի խստիվ պահպանմամբ:*

10. Թեև ԵԴԽԽ-ն չի կարող անտեսել պետությունների միջև տնտեսական անհավասարությունը, այդուհանդերձ, դատարանների համար համապատասխան ֆինանսավորման ձեռքբերումը պահանջում է նաև դատարանների կողմից մեծ ներգրավվածություն բյուջեի նախագծման գործընթացում: ԵԴԽԽ-ն համաձայնում է, որ այդ առումով կարևոր է, որ Խորհրդարանի կողմից դատական բյուջեի ընդունման հետ կապված միջոցառումները ներառեն ընթացակարգ, որում հաշվի են առնվում դատական համակարգի կարծիքները:

11. Բյուջեի մշակման գործընթացում դատական նման ակտիվ ներգրավվածության եղանակներից մեկը կարող է լինել դատական համակարգի կառավարման համար պատասխանատու անկախ մարմնին (այն երկրներում, որտեղ նման մարմին առկա է) դատարանների ֆինանսավորման հայտերի նախապատրաստման գործընթացը համակարգողի դերի տրամադրումը և դարձնել այս մարմինը Խորհրդարանի հետ անմիջական շփման օղակ՝ դատարանների կարիքների գնահատման համար: Ցանկալի է, որ մարմինը, որը ներկայացնում է բոլոր դատարաններին լինի պատասխանատու բյուջետային հայտերը Պառլամենտին կամ վերջինիս հատուկ հանձնաժողովներից մեկին ներկայացնելու համար:

55. Դատարանների միջև միջոցների բաշխման վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն դատական համակարգի անկախության սկզբունքի խստորեն պահպանմամբ և դատական համակարգը պետք է ունենա հնարավորություն արտահայտելու իր կարծիքները

Խորհրդարանին առաջարկվող բյուջեի վերաբերյալ՝ հնարավոր է դատական խորհրդի միջոցով:

8. Ազատություն չհիմնավորված արտաքին ազդեցությունից.

56. Դատական մարմինների անկախության երկու ասպեկտները լրացնում են մեկը մյուսին: Արտաքին անկախությունը պաշտպանում է դատավորին պետական մյուս իշխանությունների ազդեցությունից և իրավունքի գերակայության կարևոր տարր է: Ներքին անկախությունը (տե՛ս ստորև, 10-րդ գլխում) ապահովում է որպեսզի դատավորները որոշումներ կայացնեն միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, այլ ոչ բարձր աստիճանի դատավորների կողմից տրված կարգադրությունների հիման վրա:

57. Թիվ (94)12 Հանձնարարականը սահմանում է (Սկզբունք 1.2.d). *Որոշումների կայացման ընթացքում դատավորները պետք է լինեն անկախ և կարողանան գործել առանց որևէ սահմանափակումների, կողմնակի ազդեցության, շարժառիթների, ճնշումների, սպառնալիքների կամ միջամտության, ուղղակի կամ անուղղակի, ցանկացած կողմից կամ ցանկացած պատճառով: Օրենքը պետք է սահմանի սանկցիաներ այն անձանց նկատմամբ, որոնք որևէ կերպ փորձում են ազդել դատավորների վրա: Դատավորները պետք է ունենան անխոչընդոտ անկախություն անաչառ կերպով որոշումներ կայացնելու, իրենց խղճի վրա հիմնվելով և փաստերի իրենց մեկնաբանմամբ՝ իրավունքի գերակայության սկզբունքին համապատասխան:*

58. ԵԴԽԽ-ն իր թիվ 1 Կարծիքում (63-րդ կետ) մեկնաբանում է. (...) Դժվարությունը կայանում է նրանում, թե ինչ է իրենից ներկայացնում չհիմնավորված ազդեցությունը և համապատասխան հավասարակշռության ապահովումը, օրինակ՝ դատական քննությունը խեղաթուրումից և ճնշումներից պաշտպանելու անհրաժեշտության, լինի դա քաղաքական, ՉԼՄ-ների կամ այլ շրջանակների կողմից, հանրային նշանակության հարցերի բաց քննարկման և մամուլի ազատության ապահովման միջև: Դատավորները պետք է ընդունեն, որ իրենք հանրային գործիչներ (կերպարներ) են և չպետք է լինեն չափազանց զգայուն կամ խոցելի:

59. Դատավորների քրեական և քաղաքացիական պատասխանատվության հարցերը և անձեռնմխելիության հարցերը պետք է քննարկվեն այս համատեքստում: ԵԴԽԽ-ն թիվ 3 Կարծիքում, հիմք ընդունելով դատավորների մասնագիտական վարքագիծը կարգավորող սկզբունքները և կանոնները, մասնավորապես՝ էթիկան, անհամատեղելի վարքագիծը և անաչառությունը, եզրակացնում է. *75. Քրեական պատասխանատվության առումով՝*

i) դատավորները պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության քրեական օրենսդրությամբ սահմանված կարգով այն իրավախախտումների (հանցագործությունների) համար, որոնք կատարվել են նրանց դատական գործունեությունից դուրս:

ii) Քրեական պատասխանատվությունը չպետք է կիրառվի դատավորների նկատմամբ, եթե նրանք կատարել են ոչ դիտավորյալ իրավախախտում՝ իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելիս:

76. Քաղաքացիական դատավարության առումով ԵԴԽԽ-ն համարում է, որ հաշվի առնելով անկախության սկզբունքը.

i) դատական սխալներն ուղղելը (քննության կարգի, էության կամ ընթացակարգի վերաբերյալ) պետք է հիմնված լինի բողոքարկման համապատասխան համակարգի վրա (դատարանի թույլտվությամբ կամ առանց դրա).

ii) արդարադատության իրականացման ընթացքում առաջացած այլ խախտումների ուղղման ցանկացած պահանջ (ներառյալ օրինակ՝ գործի քննության անհարկի ձգձգումները) պետք է ուղղվի պետությանը.

iii) դատավորները չպետք է ենթարկվեն որևէ անձնական պատասխանատվության իրենց դատական գործառնությունների իրականացման համար, նույնիսկ պետությանը հատուցելու ճանապարհով՝ բացառությամբ դիտավորյալ խախտման դեպքի:

60. Վենետիկի հանձնաժողովն արտահայտվելով դատավորների սահմանափակ ֆունկցիոնալ անձեռնմխելիության օգտին նշել է.

Դատավորները չպետք է օգտվեն ընդհանուր անձեռնմխելիությունից, ինչպես նշվում է Բուլղարիայի Սահմանադրությունում: Ելնելով ընդհանուր չափանիշներից՝ նրանք իրականում ունեն քաղաքացիական հայցերից պաշտպանության անհրաժեշտություն՝ բարեխղճորեն կատարած այն գործողությունների համար, որոնք կատարել են իրենց գործառնություններն իրականացնելիս: Նրանք չպետք է օգտվեն ընդհանուր անձեռնմխելիությունից, որը պաշտպանում է նրանց հետապնդումից այն քրեական գործողությունների կատարման համար, որոնց համար նրանք պետք է պատասխանատու լինեն դատարանի առջև (CDL-AD(2003)12, պարագրաֆ 15.a):

61. Անհերքելի է, որ դատավորները պետք է պաշտպանվեն չհիմնավորված արտաքին ազդեցությունից: Այս նպատակով նրանք պետք է ունենան միայն ֆունկցիոնալ անձեռնմխելիություն (անձեռնմխելիություն հետապնդումից կապված իրենց գործառնությունների իրականացման հետ, բացառությամբ դիտավորյալ հանցագործությունների, օրինակ՝ կաշառք վերցնելը):

62. Ավելին, դատավորները չպետք է իրենց դնեն այնպիսի իրավիճակում, որտեղ նրանց անկախությունը և անաչառությունը կարող է կասկած հարուցել: Նշվածն արդարացնում է դատավորի պաշտոնի անհամատեղելիությունն այլ գործառնությունների հետ և այդ է պատճառը, որ շատ պետություններ սահմանափակում են դատավորների քաղաքական գործունեությունը:

63. Անաչառությունը նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջն է և ունի նման, սակայն առանձին ընդգծվածություն անկախության հասկացությունից: Դատավորները պետք է ինքնաբացարկ հայտնեն, եթե նրանց մասնակցությունը գործին կարող է առաջացնել կողմնակալության հիմնավոր ընկալում կամ շահերի բախում, անկախ նրանից, թե դատավորը որտեղ է կողմնակալ:

64. Որպեսզի պաշտպանվի դատական քննությունը չհիմնավորված ազդեցությունից, անհրաժեշտ է հաշվի առնել «Դատաքննության ընթացքում գտնվելու» սկզբունքի կիրառումը, որը պետք է խնամքով պաշտպանվի, այնպես որ ապահովվի հավասարակշռությունը, դատական քննության պաշտպանության անհրաժեշտությունը մի կողմից և մամուլի ազատությունն ու հանրային նշանակության հարցերի բաց քննարկման անհրաժեշտությունը՝ մյուս կողմից:

9. Դատական ակտերի վերջնական լինելու բնույթը.

65. (94) 12 Հանձնարարականը I (2)(a)(i) սահմանում է, որ «Դատավորների որոշումները չեն կարող լինել որևէ վերանայման առարկա, բացառությամբ բողոքարկման ընթացակարգերից դուրս, օրենքով սահմանված դեպքերում»: Նշվածը պետք է ընկալվի, որ սույն սկզբունքը չի բացառում քննության վերսկսումը բացառիկ գործերով նոր փաստերի կամ օրենքով սահմանված այլ հիմքերի առկայության դեպքում:

66. Ինչպես եզրակացնում է ԵԴԽԽ-ն թիվ 1 Կարծիքում (65-րդ կետ)՝ իր հարցաթերիկի պատասխանների հիման վրա, այս սկզբունքը, ինչպես ներկայացվում է, ընդհանուր առմամբ թվում է թե պահպանվում է Վենետիկի հանձնաժողովի փորձը և ՄԻԵԴ

նախադեպային իրավունքը: Հետսովետական երկրների դատախազության վերահսկողական լիազորությունները հաճախ այնքան լայն են, որ կարող են առարկել այն դատական որոշումները, որոնք բողոքարկման ենթակա չեն:

67. Վենետիկի հանձնաժողովն ընդգծում է սկզբունքը, որ դատական որոշումները չեն կարող լինել որևէ վերանայման առարկա, մասնավորապես՝ դատախազի առարկման միջոցով կամ ցանկացած այլ պետական մարմնի կողմից բողոքարկման ժամկետի ավարտից դուրս:

10. Անկախությունը դատական համակարգի ներսում (շրջանակներում).

68. Դատական համակարգի ներսում անկախության խնդիրը քիչ ուշադրության է արժանացել միջազգային փաստաթղթերում, քան արտաքին անկախության հարցը: Թվում է, այնուամենայնիվ, այն պակաս կարևոր չէ: Որոշ սահմանադրություններում նշված է, որ «Դատավորները ենթարկվում են միայն օրենքին»: Այս սկզբունքը պաշտպանում է դատավորներին նախ և առաջ չհիմնավորված արտաքին ազդեցությունից: Այն, այնուամենայնիվ, կիրառելի է նաև դատական համակարգի ներսում: Դատական համակարգի հիերարխիկ կազմակերպումը՝ դատավորների կողմից որոշումների կայացման գործընթացում դատարանի նախագահին կամ բարձր աստիճաններին ենթարկվելու իմաստով, կհանդիսանա սույն սկզբունքի ակնհայտ խախտում:

69. Այս հարցով ԵԴԽԽ-ի հիմնական դիտարկումները հետևյալն են. 64. **Հիմնարար մոտեցումն այն է, որ դատավորն իր գործառույթներն իրականացնելիս որևէ մեկի աշխատակիցը չէ, նա պետական պաշտոն զբաղեցնող է: Այսպիսով նա ծառայում է և պատասխանատու է միայն օրենքի առջև:** Ապացուցման ենթակա չէ (աքսիոմա է), որ գործը քննող դատավորը չի գործում դատական համակարգի ներսում կամ դրանից դուրս երրորդ կողմի որևէ հրամանով կամ կարգադրությամբ (ցուցումով):

66. ԵԴԽԽ-ն նշում է իրական վտանգը դատական մարմինների անկախության համար, որը կարող է ծագել ներքին դատական հիերարխիայի կողմից: Հայտնի է, որ դատական մարմինների անկախությունը կախված է ոչ միայն չհիմնավորված արտաքին ազդեցությունից ազատ լինելուց, այլ նաև չհիմնավորված ազդեցության ազատությունից, որը կարող է որոշ իրավիճակներում առաջանալ այլ դատավորների դիրքորոշումներից: Դատավորները պետք է ունենան անսահմանափակ ազատություն անաչառ կերպով որոշումներ կայացնելու համար, **իրենց խղճից ելնելով և փաստերի իրենց մեկնաբանմամբ,** ինչպես նաև գործող իրավակարգին համապատասխան (Հանձնարարական թիվ R (94) 12, Սկզբունք I (2) (d)): Սա նշանակում է, որ դատավորները պետք է գործեն անհատականորեն: Տերմինները, որոնցում ձևակերպված է նշված մոտեցումը, չեն բացառում նման դոկտրինների առկայությունը, որոնք հիմնվում են նախադեպերի վրա ընդհանուր իրավունքի երկրներում (օրինակ՝ պարտականություն ստորին աստիճանի դատավորի հետևելու բարձր աստիճանի դատավորի կողմից առավել վաղ ընդունված որոշմանը իրավական խնդրի վերաբերյալ, որն առաջացել է քննվող գործում):

70. Ուղղորդող սկզբունքների կիրառումը Բարձրագույն դատարանի կամ այլ բարձր աստիճանի դատարանի կողմից և ստորին աստիճանների դատարաններին դրանց պարտադրումը, որն առկա է որոշ հետսովետական երկրներում խնդրահարույց է այս առումով:

71. Վենետիկի հանձնաժողովը մշտապես պաշտպանում է յուրաքանչյուր անհատ դատավորի անկախության սկզբունքը: Ի վերջո, Բարձրագույն դատարանին ընձեռելով ընդհանուր **դատարանների գործողությունները վերահսկելու** իրավազորությամբ (Հնդված

51, պարագրաֆ 1) այն կհակասեր նման դատարանների անկախության սկզբունքին: Մինչդեռ, Բարձրագույն դատարանը պետք է ունենա իրավասություն վերացնելու կամ փոփոխելու ստորադաս դատարանի վճիռները (որոշումները) և չպետք է վերահսկի նրանց (CDL-INF (1997)6 6-ում): Դատական մարմինների անկախության ներքո բարձր ատյանների դատարաններն ապահովում են նախադեպային իրավունքի համաձայնեցվածությունն իրենց երկրների տարածքում առանձին գործերով կայացված որոշումների միջոցով: Ստորադաս դատարանները Քաղաքացիական իրավունքի համակարգում, ի հակադրումն սովորույթային իրավունքի համակարգի ավանդույթին, կաշկանդված չլինելով դատական նախադեպերով, հակված են հետևել ավելի բարձր ատյանի դատարանների որոշումներում զարգացված սկզբունքներին, այդպիսով խուսափելով բողոքարկման ընթացքում իրենց որոշումների բեկանումից: Բացի այդ, հատուկ դատավարական կանոնները կարող են ապահովել համաձայնեցվածությունը տարբեր դատական ատյանների միջև: Սույն նախագիծը հիմնովին հեռանում է այդ սկզբունքից: Այն Բարձրագույն դատարանին (Հոդված 51.2.6 և 7), առավել նեղ շրջանակներում՝ Բարձրագույն մասնագիտացված դատարանների պլենիումին (Հոդված 50.1), տալիս է հնարավորություն ստորադաս դատարաններին տալու /հանձնարարականներ/ բացատրություններ/ օրենսդրության կիրառման վերաբերյալ: Այս համակարգը դժվար թե նպաստի իրապես անկախ դատական համակարգի ձևավորմանը: Ուկրաինայում, այլ վտանգ է առկա, որ դատավորները կգործեն որպես պետական ծառայողներ, որոնք կատարում են իրենց վերադասների հրամանները: Նախագծում հիերարխիկ (աստիճանակարգված) մոտեցման մեկ այլ օրինակ է Բարձրագույն դատարանի Գլխավոր դատավորի լայն իրավասությունները (Հոդված 59): Նա, կարծես, իրականացնում է այս չափազանց կարևոր իրավասություններն անհատապես, առանց որևէ անհրաժեշտության դիմելու Պլենիումին կամ Պրեզիդիումին: Դատարանների անկախությունը ոչ միայն դատական համակարգի անկախությունն է որպես ամբողջություն պետական իշխանության մյուս ճյուղերի հետ համեմատությամբ, այլ նաև ունի «ներքին» ասպեկտ: Յուրաքանչյուր դատավոր, դատական համակարգում նրա զբաղեցրած տեղից անկախ, իրականացնում է նույն իշխանությունն արդարադատություն իրականացնելիս: Դատական ակտ կայացնելիս դատավորը պետք է անկախ լինի ինչպես այլ դատավորների, այնպես էլ իր դատարանի նախագահի կամ այլ (օրինակ՝ վերաքննիչ կամ վճռաբեկ) դատարանների հետ հարաբերություններում: Իրականում ավելի ու ավելի շատ քննարկումներ են ծավալվում դատական համակարգի ներքին անկախության վերաբերյալ: Դատական համակարգի անկախության լավագույն պաշտպանությունը և ներքին, և արտաքին, կարող է երաշխավորվել Բարձր Դատական Խորհրդի կողմից, քանի որ այն ճանաչվել է այդպիսին դատարանների անկախության հարցերի վերաբերյալ միջազգային հիմնական փաստաթղթերում (CDL (2007)003 61-ում):

72. Ընդհանրացնելով վերոգրյալը՝ Վենետիկի հանձնաժողովն ընդգծում է, որ դատական համակարգի ներքին անկախությունը նշանակում է, որ յուրաքանչյուր անհատ դատավորի անկախությունն անհամատեղելի է դատավորների սուբորդինացված հարաբերությունների հետ դատական որոշումների կայացման գործունեության ընթացքում:

11. Գործերի բաշխումը և իրավասու դատավոր ունենալու իրավունքը.

73. Ինչպես արդեն նշվել է, ներքին անկախության խնդիրն առաջանում է ոչ միայն ստորին և վերին ատյանների դատարանների դատավորների, այլ նաև դատարանի նախագահի կամ նախագահության և նույն ատյանի դատարանի մյուս դատավորների, ինչպես նաև նույն դատարանի դատավորների միջև:

74. Շատ երկրներում դատարանների նախագահներն իրականացնում են լուրջ ազդեցություն կապված առանձին դատավորների միջև գործերի բաշխման հետ: Ինչ վերաբերում է գործերի բաժանմանը, (94) 12 Հանձնարարականը պարունակում է սկզբունքներ (Սկզբունք I.2.e և f), որոնք կարող են կարևոր համարվել դատական համակարգի անկախության հասկացության առումով: Գործերի բաշխմանը չպետք է ազդի գործով որևէ կողմի ցանկություն կամ ցանկացած անձ, ով շահագրգռված է գործի ելքով: Նման բաշխումը կարող է, օրինակ, իրականացվել վիճակահանության կամ ավտոմատ համակարգի միջոցով՝ այբբենական հաջորդականությամբ կամ նմանատիպ կարգով: Գործը չի կարող հետ կանչվել կոնկրետ դատավորից առանց հիմնավոր պատճառի, այնպիսի դեպքերում, ինչպիսիք են լուրջ (ծանր) հիվանդությունը կամ շահերի բաշխումը: Ցանկացած նման հետ կանչման պատճառ կամ ընթացակարգ պետք է սահմանվի օրենքով և չի կարող կախված լինել կառավարության կամ վարչակազմի որևէ շահից: Գործը դատավորից հետ կանչելու մասին որոշումը պետք է կայացվի այն մարմնի կողմից, որն ունի այդպիսի անկախություն, ինչպիսին դատավորինն է:

75. Այդ կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը նշել է նաև, որ դատավորների միջև գործերի բաշխումը պետք է հիմնվի օբյեկտիվ չափանիշների վրա (CDL-AD(2002)026 70.7-ում):

76. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան սահմանում է, որ.

«Յուրաքանչյուր ոք, ունի անկախ ու անաչառ դատարանի կողմից արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք» (ՄԻԵԿ 6-րդ հոդված): Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան՝ «օրենքի վրա հիմնված» հասկացության խնդիրը Հոդված 6-ում կայանում է նրանում, որպեսզի դատարանակազմությունը ժողովրդավարական հասարկությունում կախված չլինի Գործադիրի հայեցողությունից, այլ կարգավորվի օրենքով՝ ընդունված Խորհրդարանի կողմից⁵: Այն երկրներում, որտեղ օրենքը կողմիջակացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, թեև դա չի նշանակում, որ դատարանները չունեն գործունեության որոշակի ազատություն մեկնաբանելու համապատասխան ազգային օրենսդրությունը⁶:

77. Գլխավոր հարցը, որը պետք է նշվի այն է, որ Հոդված 6-ում արտահայտված խոսքերից դատելով՝ միջոցը, որով պետք է ապահովվի արդարադատության մատչելիությունը, չպետք է լինի միայն օրենքի վրա հիմնված դատարանը, այլ նաև, դատարան, որը և անկախ է և անաչառ՝ ընդհանուր և հատուկ իմաստներով: Արդար դատաքննության այս պահանջների գնահատմամբ՝ Ստրասբուրգի դատարանը սահմանել է, որ «Արդարադատությունը չպետք է միայն իրականացվի, այն պետք է նաև իրականացվի հրապարակայնորեն»: Այս ամենը ենթադրում է, որ կոնկրետ գործեր քննող դատավորները կամ դատական կոլեգիալ կազմերը չպետք է ընտրվեն ad hoc կամ ad personam սկզբունքներով, այլ օբյեկտիվ և թափանցիկ չափորոշիչներից ելնելով:

78. Եվրոպական բազմաթիվ սահմանադրություններ բովանդակում են իրավասու դատավորի սուբյեկտիվ իրավունք (դոկտրինում հաճախ հիշատակվում է բնական դատավոր օրենքով նախապես սահմանված): Շատ հաճախ, նշված երաշխիքը ձևակերպվում է բացասական կերպով, այնպես ինչպես Բելգիայի Սահմանադրությունում. «Ոչ ոք չի կարող

⁵ Տե՛ս Ջանդն ըննդեմ Ավստրիայի գործը, դիմում թիվ 7360/76, Հանձնաժողովի 1978 թվականի հոկտեմբերի 12-ի գեկույց, որոշումներ և գեկույցներ (ՈՋ) 15, էջ.70 և 80:

⁶ Տե՛ս Կոյունեն և մյուսներն ըննդեմ Բելգիայի գործը, թիվ թիվ 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 և 33210/96, պարագրաֆ 98 ՄԻԵԿ 2000-VII:

առանձնացվել իր կամքից անկախ այն դատավորից, ով իր համար նշանակվել է օրենքով (Հոդված 13) կամ Իտալիայում. «Ոչ ոք չի կարող հեռացվել օրենքով կանխորոշված բնական դատավորից»: Այլ պետությունների սահմանադրություններում «Իրավասու դատավորի իրավունքը» ձևակերպվում է դրական կերպով, ինչպես Սլովենիայի Սահմանադրությունում. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր իրավունքների, պարտականությունների և իր դեմ ներկայացված ցանկացած մեղադրանքի վերաբերյալ ցանկացած որոշում կայացվի առանց անհիմն ձգձգման, անկախ, անաչառ, օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից: Միայն օրենքով նախապես սահմանված կանոններին և դատական կարգավորումներին համապատասխան պատշաճ կարգով նշանակված դատավորը կարող է որոշում կայացնել այդպիսի անձի վերաբերյալ»:

79. Երաշխիքը կարող է դիտարկվել երկու ասպեկտներով: Առաջինը վերաբերում է դատարանին որպես ամբողջություն: Մյուսը վերաբերում է գործը քննող անհատ դատավորին կամ դատավորների կոլեգիալ կազմին: Այս սկզբունքի տեսանկյունից, ակնհայտ է, որ «Իրավասու դատավորի իրավունքի» երկու մոտեցումներն էլ պետք է զարգացվեն: Բավարար չէ, երբ նախապես որոշված է միայն դատարանը (կամ դատական ճյուղը), որն իրավասու է կոնկրետ գործերով: Կարևոր է նաև այն կարգը, որով անհատ դատավորը (կամ դատավորների կոլեգիալ կազմը) նախապես որոշվում է, ինչը նշանակում է, որ այն պետք է հիմնված լինի ընդհանուր օբյեկտիվ սկզբունքների վրա: Ցանկալի է հստակորեն նշել, թե ում վրա պետք է դրվի գործերի պատշաճ բաշխման համար վերջնական պատասխանատվությունը: Ազգային օրենսդրությունում, երբեմն սահմանվում է, որ դատարանի նախագահը պետք է ունենա գործերն առանձին դատավորների միջև բաշխելու լիազորություն: Այնուամենայնիվ, այս լիազորությունը ներառում է հայեցողականության տարր, որը կարող է չարաշահումների առարկա հանդիսանալ դատավորների նկատմամբ ճնշումներ գործադրելու առումով՝ գերծանրաբեռնելով նրանց գործերով կամ հանձնելով միայն նվազ կարևորություն ունեցող գործեր: Հնարավոր է նաև քաղաքական նշանակության գործերի հանձնում կոնկրետ դատավորների և դրանք այլ դատավորների բաշխելուց խուսափում: Նշվածը կարող է բավականին արդյունավետ միջոց լինել քննության արդյունքի վրա ազդելու համար:

80. Դատական համակարգի անկախությունը և անաչառությունն ամրապնդելու նպատակով՝ հետևողականորեն խորհուրդ է տրվում որպեսզի կարգը, որի համաձայն դատավորները ստանում են գործերը, լինի նախապես սահմանված ընդհանուր չափորոշիչի հիման վրա: Սա կարող է կատարվել, օրինակ՝ այբբենական կարգով, համակարգչային համակարգով կամ օբյեկտիվ չափորոշիչներով, ինչպիսին օրինակ գործերի կատեգորիաներն են: Ընդհանուր կանոնները (ներառյալ բացառությունները) պետք է ձևակերպված լինեն օրենքով կամ օրենքի հիման վրա հատուկ կարգավորումներով, օրինակ՝ դատարանի կանոնադրությունում՝ սահմանված նախագահի կամ նախագահության կողմից: Ոչ միշտ է հնարավոր ստեղծել ամբողջությամբ համապարփակ համակարգ, որը գործում է բոլոր դեպքերում՝ չթողնելով առանձին գործերի բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու հնարավորություն: Կարող են լինել դատավորների ծանրաբեռնվածությունը կամ մասնագիտացումը հաշվի առնելու անրաժեշտություն պահանջող իրավիճակներ: **Հատկապես բարդ իրավական վեճերը կարող են պահանջել տվյալ ոլորտում փորձառու դատավորների մասնակցություն:** Ավելին, կարող է նպատակահարմար լինել նորանշանակ դատավորներին ընդգրկել դատական կազմերում առավել փորձառու անդամների հետ որոշակի ժամանակահատվածով: Բացի այդ, այն դեպքերում, երբ դատարանը բարդ կամ նշանավոր գործով պետք է կայացնի սկզբունքային որոշում, նպատակահարմար կարող է լինել, որպեսզի գործի քննությանը մասնակցեն ավագ

դատավորները: Դատարանի նախագահի կամ նախագահության կողմից նման որոշումների կայացման չափորոշիչները պետք է նախապես օրենքով սահմանվեն: **Կատարյալ առումով, գործերի բաշխման կարգը պետք է պարբերաբար վերանայման առարկա դարձվի:**

81. Ընդհանրացնելով վերոգրյալը՝ Վենետիկի հանձնաժողովը հետևողականորեն խորհուրդ է տալիս, որ առանձին դատավորներին գործերի բաշխումը պետք է հնարավորինս լայն ծավալով հիմնված լինի օրենքով նախապես սահմանված կամ օրենքի հիման վրա հատուկ կարգավորումներով (օրինակ՝ դատարանների կանոնադրություններով) նախատեսված օբյեկտիվ և թափանցիկ չափորոշիչների վրա: Բացառությունները պետք է լինեն պատճառաբանված:

IV. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

82. Հետևյալ չափանիշները պետք է հարգվեն պետությունների կողմից որպեսզի ապահովվի դատական իշխանության ներքին և արտաքին անկախությունը.

1. Դատական իշխանության անկախությանը վերաբերող հիմնական սկզբունքները պետք է ամրագրվեն Սահմանադրություններում կամ համարժեք փաստաթղթերում: Այս սկզբունքները ներառում են դատական իշխանության անկախությունը պետական մյուս իշխանություններից, այն որ դատավորները ենթարկվում են միայն օրենքին, նրանք տարբերակվում են միայն իրենց գործառնությունների տարբերությամբ, ինչպես նաև օրենքով նախապես ստեղծված բնական կամ իրավասու դատավորի և նրա անփոփոխելիության սկզբունքները:

2. Դատավորների նշանակմանը և առաջխաղացմանը վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն արժանիքների վրա՝ օրենքի շրջանակներում օբյեկտիվ չափորոշիչների կիրառմամբ:

3. Անհամատեղելիության և դատավորներին ինքնաբացարկ հայտնելու կանոնները դատական իշխանության անկախության կարևոր տարր են:

4. Դատական իրշխանության անկախությունը երաշխավորող համապատասխան միջոց է այն, որ անկախ արդարադատության խորհուրդն ունի որոշիչ ազդեցություն դատավորների նշանակման և առաջխաղացման որոշումների կայացման գործընթացում: Հարգելով առկա իրավական համակարգերի բազմազանությունը՝ Վենետիկի հանձնաժողովի հանձնարարական է, որ պետությունները, որոնք դեռևս չունեն նման մարմին, պետք է դիտարկեն անկախ արդարադատության խորհրդի ստեղծման հարցը: Բոլոր դեպքերում խորհուրդը պետք է ունենա բազմակարծիք կազմ, անդամների էական մասը, եթե ոչ մեծամասնությունը, պետք է լինեն դատավորներ: Բացառությամբ ի պաշտոնե անդամների՝ այս դատավորները պետք է ընտրվեն կամ նշանակվեն իրենց գործընկերների կողմից:

5. Սովորական դատավորները պետք է նշանակվեն անժամկետ՝ մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը: Դատավորների համար փորձաշրջանի ժամանակահատվածը խնդրահարույց է նրաց անկախության տեսանկյունից:

6. Արադարադատության խորհուրդները կամ կարգապահական դատարանները **պետք է ունենան որոշիչ ազդեցություն կարգապահական վարույթներում:** Պետք է նախատեսվի կարգապահական մարմինների որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն:

7. Դատավորների համար պետք է երաշխավորվի վարձատրության այն մակարդակը, որը համապատասխանում է նրանց զբաղեցրած պաշտոնի արժանապատվությանը և պարտականությունների շրջանակին:

8. Դատավորների պարգևավճարները և ոչ դրամական արտոնությունները, որոնց հատկացումը պարունակում է հայեցողականության տարր, պետք է աստիճանաբար վերացվի:

9. Ինչ վերաբերում է դատական համակարգի բյուջեին, դատարանների միջև միջոցների բաշխման վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն դատարանների անկախության սկզբունքի խստագույն պահպանմամբ: Դատական համակարգը պետք է հնարավորություն ունենա Խորհրդարանում արտահայտելու իր կարծիքները բյուջեի նախագծի վերաբերյալ՝ հավանաբար արդարադատության խորհրդի միջոցով:

10. Դատավորները պետք է ունենան միայն գործառույթային անձեռնմխելություն:

11. Դատավորները չպետք է իրենց դնեն այնպիսի իրավիճակում, որտեղ նրանց անկախությունը և անաչառությունը կարող է կասկածի տակ դրվել: Սա արդարացնում է դատավորի պաշտոնի հետ այլ գործառույթների անհամատեղելիության վերաբերյալ ազգային կանոնները և այդ է պատճառը, որ շատ երկրներ սահմանափակում են դատավորների քաղաքական գործունեությունը:

12. Պետությունները կարող են սահմանել դատավորի պաշտոնի անհամատեղելիություն այլ գործառույթների հետ: Դատավորները չպետք է իրականացնեն գործադիր գործառույթներ: Քաղաքական գործունեությունը, որը կարող է խոչընդոտել դատական լիազորությունների անաչառությանը, չպետք է թույլատրվի:

13. Դատական որոշումները չպետք է որևէ վերանայման առարկա հանդիսանան բողոքարկման ընթացքից դուրս, մասնավորապես՝ դատախազի կողմից առարկման միջոցով կամ այլ պետական մարմնի կողմից՝ բողոքարկման ժամկետի ավարտից հետո:

14. Նպատակ ունենալով պաշտպանել դատական քննությունը չհիմնավորված ճնշումից՝ պետք է դիտարկել «sub judice» սկզբունքի կիրառումը, որը պետք է խնամքով պաշտպանվի, այնպես որ համապատասխան հավասարակշռություն ապահովվի մի կողմից դատական քննության պաշտպանության և մյուս կողմից՝ մամուլի ազատության և հանրային նշանակության հարցերի բաց քննարկման միջև:

15. Ներքին անկախության սկզբունքը նշանակում է, որ յուրաքանչյուր առանձին դատավորի անկախություն անհամատեղելի է դատական որոշումների կայացման գործունեության ընթացքում դատավորների ենթակայական հարաբերությունների հետ:

16. Որպես օրենքի հիման վրա նախապես ստեղծված բնական կամ իրավասու դատավորի սկզբունքի դրսևորում՝ առանձին դատավորներին գործերի բաշխումը պետք է հիմնված լինի օրենքով նախապես սահմանված կամ օրենքի հիման վրա հատուկ կարգավորումներով նախատեսված օբյեկտիվ և թափանցիկ չափորոշիչների վրա: Բացառությունները պետք է լինեն պատճառաբանված: